

Պատկերներ ԳՐԱՌՈՒԹԻՒՆ

Պոչկարիոյ	համար
Տարեկան	12 թր
Կիցանակայ	6 "
Արտասահմանի	
համար տարեկան	15 "
Կիցանակայ	8 "

Անկերիկայի	համար
Տարեկան	3 ռըր
Կիցանակայ	4.50 "

Մանուգրան տղր սոսս շին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսին համար 20 սակարիւ հ. երեսին տեղի ակգուսկերու համար 20 0/0 զեղչ կըլ

Լայր վառնայի համար ձևի 10 սակարիւ

# ՇԱՐՋՈՒՄ

## ՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂՈՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԻՏՐԱԿՈՒԻ ԶՈՐԵԲԵՌԱԹԻ ԵՒ ՀԱՐԱՆԹ ՕՐԵՐԸ

Նախակ և զրամ զրկեչ հոլագրոքոքանս հասցիիև

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjourn“ Varna (Bulgarie)

Արտասահմանի համար ձեռքի ( 20 ՍԱՆԹԻՄ ) Պոչկարիոյ համար ձեռքի ( 15 ՍԱՆԹԻՄ )

Գրուքիւնք ևս չեն տրուիր

ՇՈՒՐԹՈՒՄ Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺԱՆԻՒՆԸ ՊԵՏԻ Ե ԿԱՆԿԻԿ ՎՃԱՐԻ

### ԱՐՄԵՆԱԿ ՂԱԶԱՐԵԱՆ

(ՀՐԱՅՐ-ԴՅՈՒՆ-ՈՒՐԻՒԿԱՆ)

Նա էլ ընկաւ, սիրահարը հրապարտ լեռներին, ուր նա ազատութեան կրակն էր բորբոքում, իբրև ապագի ու քարոզիչ, իբրև խմբագրու և գործիչ, Աշխատեց հաւատով և մեռաւ հպարտօրէն, կուրծքը թշնամուն տաւ. նրա օրինակը գնահատելի է. կեանքը՝ խրատուող. Աւաղիկայում այդ կեանքին, լի հրապարական գծերով, կը ներթափն շատ էջեր «Իրօչակ» մէջ, գրեւծ նոյնիսկ նրա ցուակիցներին ձեռքով, որոնք բաժանեցին նրա վրէժն ու պարծանքը, նրա տառապանքներն ու յոյսերը:

Հարազատ ձեռնդ վշտավայրի (Մշտ գաշտիցն էր նա), ապրած այն մշտնորոտում, որ ստեղծեց հայկական շարժումը, նա եղաւ ոչ միայն յեղափոխական զեկավար, այլ ամենուրեւ հագեալ նրա ժողովրդի: Մասնաւորական հոգեբանութեան վարպետ էր Հրայրը: Եւ կասկածոտ ամբողջ խաւերի մէջ ոչ ոքի չէր աջողում ձեռք բերել այն լայն հեղինակութիւնն ու անպայման հատուր, ինչ որ վայելում էր Սասունի աշխատաւորը: Այդ կողմից նա մի կախարհ է, որ անհատաւորի հեղու թեմաք կարողանում էր մղել մարդկանց, նոյնիսկ թեթահատաններին, զէպի ամենազուարթին գործեր, զէպի անձնազոհութիւն:

Աչքերը յառած հայկական ազատագրութեան նպատակակետին, որին նա մնաց միշտ հատարիմ, եվրեւ զործի մէջ և զեկավարած մի միայն մի քաղաքականութեամբ՝ յեղափոխական գործի քաղաքականութեամբ, նա պատրաստ էր ձեռք մեկնել ամենքին, որոնք նրա օգնութեանն էին դիմում, և աջակցութիւն ընդունել բոլորից՝ ուր դա նպատակայարմար էր, առանց կուսակցական խտրութեան, Դա նրա մտածողութեան բնորոշ գծերից

Տէկն էր:

«Այաբազդ կուտող, նա էլ, ինչպէս և նոյն գործի ուրիշ մշակները, չը տեսաւ այն Մեծ Արշալոյսը, որին վշտոտ սրտով և հրակայական համբերութեամբ սպասում են սերունդներ սերունդներին յետեւից, լեռների կատարներին և բանտերի մութ խորշերում: Նա զգաց, որ կուրծքը կատաղրական է, և վախճանը՝ մտ: Զգաց, բայց յետ չնահանջեց: Ահա թէ ինչ էր գուշակում Մեծալի անփոխարինելի հերոսը մի նամակում, որ նրա վերջին ողբաս բարոյական պէտք է համարել Սասուն, 27 փետրուար

«Ընկերներ,

«Օրէջօր ժողովրդի զրութիւնը կը վառվարանայ. կոտորածի ձեռնարկներ կը ծրարուին և փորձեր կը կատարուին: Աւաղիկայից Բաղէշէն օձանակաւ կոչուած հեծեակներով հասաւ Մուշ և տեղաւորեցաւ հայոց թաղերը: Տիպտարենց Մէհմէտ էֆ. անուն հարիւրապետը՝ 15-20 ոստիկաններով քիւրդ ցեղապետներու հետ խորհրդակցութեան պաշտօնով՝ կը շրջի Դաշտի մէջ, Անուշտ թրքական զբոսիք մը շինելու ծրագրեր կը կազմել նոյն այս ձեռնայ միջոցին:

«Մշտ և Դաշտի յարաբերութիւնները խզած են. շուկան հինգ օրէի վեր հայերից ամայի է, առետուրը ամբողջապէս դադրած է. զեղէ գեղ երթեւեկութիւնը արգիւրած է Մեծ պահի ատաղին օր, Սասունը Տարբէր գիւղի քրքրը միացած Մշտ թիւրք տարրի հետ՝ յարձակեցան շուկայի մէջ հայերու վրայ. նպատակը լոկ կոտորածի սկզբնապատճառ դառնալն էր: Քանի՜ զլուս ու թիւ. ջարդեցին, նուճապը կըսկսի. հայ ազգաբնակչութիւնը այդ օրից փակուած կը մնայ թաղերու մէջ. վախճանը ո՛ւր է, չի գիտցուիր:

«Կը լուի որ թիւրքերը հեռագրատնէն երբէք չեն հեռանար. անշուշտ կարծիքներին փոխանակութիւններ կը կատարուին, դիւական ծրագրեր կը կազմուին...

«Եւ այսուհետեւ արեան ձայնը պիտի հասնի ձեր սկանջին մեր նամակներու և տեղեկագրերու փոխարէն...

«..... Կը շտապեմ և չեմ կրնար երկարել:

«Համբոյրներ և յարգանքներ: ՀՐԱՅՐ

Եւ արեան ձայնը եկաւ, աւաղ, նրա նահատակման բոթաբեր ձայնի հետ...

(Իրօչակ)

### ԴԻՒԱՆԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՊՍԱՍԻ ԾԵՂԵՐԸ

Գերի ժողովրդների օտարի ճնշող լծից ազատվելու ուղղակի միջոցը ապստամբութիւնն է, բայց, դժբախտաբար, ապստամբութիւնները առանց դիւանագիտական աշխարհի աջակցութեան իրենց նպատակին չեն հասնում: Այդ դառն ճշմարտութեան առջեւ կանգնած՝ ապստամբ ժողովրդները ապստամբութեան բոլոր պատրաստութիւնները տեսնելով հանդիման, պարտաւորված են նաեւ դիւանագիտական աշխարհում նպատակայարմար յենարան ստեղծելու ճիգը թափել, ապագային նրա օգնութիւնը ստանալու համար:

Արեւմտ ժողովրդների ազատագրութեան համար անհրաժեշտ է ձուլ և կուռ ապստամբութիւն. իսկ ապստամբութեան յաջողութիւնը ապահովելու համար դիւանագիտական զօրեղ միջամտութիւնը ինչպստ ապստամբողի:

Արիշ կերպ էլ չէր կարող լինել, որովհետեւ ապստամբող ցեղերի ամենամեծ տոկոսը, մանաւանդ ներկայ դարում, միշտ թոյլ է եղել իրեն ճնշող ցեղերից, որոնք կազմակերպված պետութիւններ կայացնելով, իրենց տրամագրութեան տակ են ունեցել պատերազմական բոլոր գործիքները: Այս պատագային ապստամբողը առանց զօրաւոր աջակցութեան չը պէտք է կարողանար իր անկախութիւնը ձեռք բերել: Այդ զօրաւոր աջակցութիւնը ապստամբ ցեղերին տուել է միշտ դիւանագիտութիւնը. թէ ինչ պատճառներից զրգված դիւանագիտութիւնը բարերարի գերում է ներկայացել հանգչ պա-

պստամբների, այդ մասին կը խօսինք մի ուրիշ անգամ, երբ առիթը գայ, իսկ հիմա մենք կաշխատենք դրական փաստերով հաստատել այն, ինչ որ վերը ասացինք:

Ամենքին էլ յայտնի է որ երբեմն Յունաստանը, Ռումանիան, Սերպիան, Բուլղարիան և Կրէտէն տաճկի լծի տակ էին գտնվում. դրանք բոլորն էլ փոքրաքանակ ժողովուրդներն էին և պատերազմական ուժի տեսակետով Թուրքիոյ հանդէպ այն նշանակութիւնը ունէին, ինչ որ նպատակը գայլի առաջ: Սրանք ապստամբեցին Թուրքիոյ դէմ, շատ մեծ զոհեր տուին, Թուրքիան կարող էր և տրամադիր դրանց բոլորին էլ փոշիի վերածել, սակայն եւրոպական դիւանագիտութիւնը միջամտեց, երբեմն խօսքով, ծայրայեղութեան պարագային թնդանութիւններ որոտումով, ու այդ ցեղերը այսօր անկախ են, բոլորովին ազատ թրքական ճիրաններից:

Եւրոպան Թուրքիային թոյլ տուց ջախջախել Յունաստանին, բայց չը թողեց փոշու վերածել կրէտացուն. ընդհակառակը նրան ազատեց:

Ինչդեմ ասացէք, այդ ցեղերից ո՞րը, չը նայելով իր ըմբոստացման գերադրական աստիճանին հասնելուն, կարող էր այսօր ազատ լինել, եթէ եւրոպական դիւանագիտութիւնը օգնութեան չը հասնէր, եւ ոչ մէկը:

Թուրքիան թողնենք մի կողմ և խօսենք Աւստրիայի մասին: Իտալացիք և Հունգարացիք Աւստրիայի լծի տակ էին. նրանք ապստամբեցին: Աւստրիան ուժը և տրամագրութիւնը ունէր այդ ցեղերին ջնջել աշխարհի երեսից. բայց նրան թոյլ չը տուց կրկին դիւանագիտութիւնը, յանձին այսինչ կամ այնինչ պետութեան: Թոյլ, բայց քաջ, ժամանակակից դիւանագիտական շահերին համապատասխան ապագայ խոստացող իտալացիները և Հունգարացիները հասան իրենց

բաղձանքին: Իսաղիան այսօր Լուսարիոյ նման մեծ պետութեանց շարքում է գտնվում, իսկ Հուն, գարիան իր անանձին վարչութիւնը և Երեսփոխանական ժողովը ունի:

Հիմա բերենք այն օրինակները, որոնք փաստում են թէ առանց գիւտնագիտական աջակցութեան ոչ մի ապստամբ ցեղ չէ կարողացել իր նպատակին հասնել, թէն օրինակ բերիլիք ցիլիքըր անելի կատարարար և անելի կանոնաւոր կերպով են ապստամբել:

Լեհ. ժողովուրդը մի քանի անգամ մեծ թափով ապստամբեց ռուս կառավարութեան դէմ և կանոնաւոր պատերազմ մղեց. սակայն նա ապստամբ չը կարողացաւ, որովհետեւ Եւրոպական գիւտնագիտութիւնը այդ միջոցին փոխանակ ապստամբին աջակցելու, աջակցեց բռնաւորին, և կամ թէ անտարբեր մնալով, չը կազմակերպված ըմբոստ ժողովուրդին թողեց կազմակերպված պետութեան ճանկերում:

Կարճը, Լեհաստանի շատ զօրաւոր ապստամբութեան պակասեց այն, ինչ որ ստացվում է համակրող, զոհողութեան պատրաստ, թէկուզ իր շահերի անսակէտով զեկավարված, գիւտնագիտական աշխարհից:

Իրլանդիան մի քանի անգամ ապստամբեց Անգլիայի դէմ, նա էլ Լեհաստանի բախտին արժանացաւ, ջախջախեց. որովհետեւ նրանք ոչ մի անգից օգնութիւն չը հասաւ նրան:

Կարճում ենք որ այս երկու տեսակի փաստերը բաւ են ապացուցանելու թէ ապստամբ ժողովուրդները առանց զօրեղ պետութեանց միջամտութեան, ոչ միայն չեն կարող իրենց անկախութիւնը ձեռք բերել, այլև նրանց գերի գոյութիւնը անգամ վտանգի մէջ է գտնվում:

Իսօքերս մասնաւորեմք և իսսանք հայերիս մասին:

Մի ժամանակ մեր հայրերը կարծում էին թէ՛ Եւրոպական գիւտնագիտութիւնը մեզ ազատութիւն կը տայ, մեր կողմից առանց ոսկէ զոհաբերութեան. զոհաբերութիւն, որը ապացուցէր թէ մենք զնահատելի գիտենք անկախութիւնը և ընդունակ ենք առանց օտարի խարաղանի ապրել, օգտակար ցեղ հանդիսանալ: Այդ արդէն չափազանց լատենտութիւն էր Եւրոպայի գիւտնագիտութեան հանդէպ:

Հիմա էլ մարդ թի կան, հայեր, որոնք կարծում են թէ, Եւրոպական գիւտնագիտութեան վրա բռնաբարութիւնն ոչ ազդում չը պէտք է հարձենել. նրանից ոչինչ չը պէտք է սպասել, այլ յոյսը մի-

այն և միայն մեզ վրա պէտք է դնել:

Սա էլ արդէն ուրիշ տեսակի չափազանցութիւն է: Օրինակ մի քանի հաւատանք թէ հայերս մի օր կը կարողանանք թուրքի դէմ հարիւր հազար զինված ապստամբ հանել: Այդ պարագային անդամ, որ երբէք չէ կարող լինել, և աշխարհիս մէջ գեռ ոչ մի գերի ժողովուրդ, նոյնիսկ մեզնից խըւով անելի բազմութիւ, չէ կարողացել իր միջից այդ քան կուռղ և զինված տարր հանել, ու այդպիսի բաներ միայն մեր միութեան կանոնները կորուզ են երեւակայել, իսկ սուտ միութեան կանոնները երեւակայող ձեւանալ, եթէ Եւրոպան մեզ աջակց չը հանդիսանայ, թուրք կառավարութիւնը ոչ միայն այդ հարիւր հազար զինակիր այլ և ըստը հայերին էլ կարող է ջախջախել:

Սա այնպիսի մի ճշմարտութիւն է, որին ոչ մի հակառակող չի գտնվի աշխարհիս երեսին. եթէ զխուժը խելի կտոր ունենայ:

Ապէս լինելուց յետոյ՝ հայերս անպատճառ յոյս պէտք է ունենանք նաեւ Եւրոպայի միջամտութեան վրա, որովհետեւ այդ միջամտութիւնը մեզ համար անհրաժեշտ է առանց այդ միջամտութեան մենք զրօ ենք, ինչ էլ որ անենք:

Սակայն Եւրոպայի վրա յոյս ունենալով հանդերձ մենք վերջնականապէս պէտք է համոզված լինենք, թէ Եւրոպան մեր յոյսը կարողարոցնէ այն պարագային միայն, երբ մենք ազգային ձուլ ապստամբութիւն կտանդենք, երբ կապացուցանենք թէ Եւրոպան կազմող մեծ պետութիւնների ու մանց շահերին նպաստաւոր կը լինի մեր ինքնուրոյն, անկախ կեանքը:

Եւ յանի որ առանց Եւրոպայի միջամտութեան մենք մեր նպատակին չենք կարող հասնել, քանի որ այդ Եւրոպան, ուղած չուղած, մեզ պէտք է, ուրեմն մեր ուշադրութեան մէջ փոքրիկ մասն էլ այդ կողմը պէտք է դարձնենք, մինչև որ ուժը կարողութիւնը ունենանք նրա ամբողջ ուշադրութիւնը մեզ վրա գալ ձեւելու:

Մինչև 95 թուականի վերջերը նոյնիսկ 96 թուականին Եւրոպական գիւտնագիտութիւնը մեզ չէր աջակցում և մեզ կոտորում էին: 97ից ի վեր ապստամբական անելի ձուլ գործեր են տեղի ունեցել տաճկահայաստանում՝ Խանսորի արշաւանք, զանազան խմբերի ընդհարումներ, Բասենի և Տէլի-Բաբայի կոլու, Սասունի ապստամբութիւն և թուրք կառավարութիւնը միջոտ արամադիր է եղել կոտորել, բայց Եւրոպան

միջամտել է. այո, դեռ ոչ մեր ցանկացած չափ զօրեղ կերպով և կոտորածներ տեղի չեն ունեցել:

Առաջ թող էլի տալիս որ թուրքը ուղած չափ մեզ կոտորէ. այսօր այդ թուրք չեն տալիս. ուրեմն Եւրոպան մի քայլ առաջ է եկել դէպի մեզ. վաղը նա անելի առաջ կը գայ. միայն մենք էլ առաջ գնանք գործով, մեր անփական ուժերով. մեր կուռ ապստամբութիւնով: Բայց իրողութիւնները այսպէս լինելուց յետոյ վեր կենալ և հայ ժողովրդին անել թէ՛ Եւրոպայից ոչինչ և ոչինչ մի սպասեր, այլ յոյսը միայն քեզ վրա դիր, այդ նշանակում է հային անել ապստամբական շարժումներից ձեռք քաշել: Որովհետեւ ամենահասարակ հայր իսկ հասկանում է որ, եթէ Եւրոպան չը միջամտէ երբէք մենք չենք կարող ազատվել. որովհետեւ մենք միայն մեր սեփական ուժերով ինչ էլ որ անենք միշտ թուրքից թուլ կը լինենք: Մեր կարծիքով հային պէտք է տեսլ. բոլոր ուժերը լարել, մասսայական կուռ ապստամբութիւն տեղծել ի այդպիսով միայն կարող են Եւրոպայից ստանալ այն միջամտութիւնը և օգնութիւնը, առանց սրի քո ամենաուժեղ ապստամբութիւնը իսկ վերջնական լուծում չի տալ քո դատին: Այսօր փոքր ըմբոստացումներից համար դահիճին ատում են՝ ոչը պէտք է մորթեն, վաղը, երբ բառի լայն մտքով ապստամբ կը լինեն, գահճին կասեն. «կաց, հայր արժանի է անկախ ապրելու»:

ՌՈՒՍ ՄԻԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՓՏՈՒԹԵԱՆ ԽՈՇՈՐ ԴՇՄԱՆՆԵՐԸ

Թուսիոյ ճարտի հետ միաժամ պատերազմը ցոյց տուաւ որ Թուս մ/ապետութեան զինուորական ներկայ պաշտօնեաներէն մեծագոյն մասը իրենց կոշմանք բարձրութեան վրայ չեն գտնուել: Մինչդեռ թշնամին արագաբար յառաջ կը քալէ, ալ ու ձախ հարձակներ կ'իջեցնէ ռուս բանակին զըլ խուս, կործանիչ հարձակներով կոշչացնէ ռուս բանակին անյողթիւ տիրոջը, ռուս բարձրագոյն պաշտօնեաները զբաղուած են ներքին էնթրիգներով, իրարու տակ փոքրով, զերար վատարեանելով: Ու միակտեմութեան գլուխը Յարը չարած այդ ներքին էնթրիգներու դանցին մէջ, ինքն սլ չը գիտեր որուն վտանգի և որուն հաւատարմութեան զործին զեկը:

Սակայն Թուսիոյ ներկայ դժբախտութիւնը միայն ասոր մէջը չէ. Փաստով, նիսուսը սկսուած է ամեն տեղ: Թուս բանակին ամեն նիւթ մատակարարող վարչութիւններն այսօր աւազականոցներու և զոզանոցներու վերածուած են. օր չի անցնել որ Եւրոպական թերթերը չը գրեն թէ այս ինչ կամ այն ինչ վարչութեան մէջ

հսկայական գողութիւններ տեղի ունեցած են. թանուած են զինուորական միջոցները, թաւառուած են կարմիր Ռաշի ընկերութեան անուակները, Գողութիւն, թաւան, դեղուած, խոշոր խոշոր գումարներով, և ասոնք այսօր չեն կատարուած, ալ պատերազմէն առաջ, շատ առաջ, միայն այսօր, ճգնաժամին մէջ է որ կիսացուին, որովհետեւ պատերազմը նիւթ և դրամ կը պահանջէ, Ու զարմանալի ոչինչ կայ այդպէս ըլլալուն մէջ:

Այլ քանտար երկրորդին մակէ վերջ, ռուս կառավարութեան ամբողջ ուշադրութիւնը կեդրոնացած է երկրին իրաւացիորէն դժգոհ և ըմբոստարը ձեռնուած մէջ. ռուս վարչութեան ամբողջ մեքենան լարուած էր սարդիկ ձերբակալելով, բանտարկելով, աքտորելով և ժողովրդին մէկ խոշոր մասը լրտեսներու, ոստիկաններու, դահիճներու, բանտարկներու վերածելով: Թուս կառավարութիւնը իր անցեալ զինուորին յաղթանակներով գողոզացած կարծես այլևս մոռցեր էր արտաքին զօրեղ թշնամիներու գոյութիւնը, և զգալով որ կառավարութեան ներկայ ձեւը տապալիւ ձգտող տարն է ուժի մի ամենամեծ թշնամին շարունակ անոր հետ կը պատերազմէր, մոռնալով որ օր մը չէ օր մը արտաքին թշնամին պիտի յանկարծակի զարնէր իր գլխուն, ինչ որ և եղաւ:

Դաւաճանութիւնն ալ ռուս բանակին մէջ շատ զօրեղ արմատներ ձրգած է: Նոյնպէս Եւրոպական թերթերէն իմացուեցաւ որ շատ մը ռուս կարեւոր սպաներ անցեալ և այստարի Թուսիոյ պատերազմական ծրագրերն ծախած են Եւրոպական պետութեանց և թէ ճարտանցիներուն:

Ուրեմն ռուս ուժիւրը այսօր կը ներկայացնէ գողերու, աւազակներու, անընդունակ բարձրներու կենդրոնացումը: Ուստի և զարմանալի չէ որ ժողովրդին հակոց և զգայուն տարրը դժգոհութեան խոշոր նշաններ կը ցուցնէ և կարծես կը փախգի որ ներկայ Թուսիան պարտուի, որպէս զի ինք անելի ուժեղ կերպով կարենայ տապալել հայրենիքը խոշոր վտանգներու մէջ նետող, ռուս ցեղին բարոյական արժանիքները նստացնող միապետական ուժիւրը:

Անցեալ օրեր Եւրոպական թերթերը հաղորդեցին թէ՛ Թուսիոյ զանազան թաղաքներուն մէջ հարկուտուր մարդիկներ հրացանի բռնուած կամ կախուած են. անոնք կը մեղադրուին եղբի իրր խոտորարներ: Իսկ վերջին օրերս նոյն Եւրոպական թերթերը հաղորդեցին թէ՛ Յարը յանձնախումբ մը կազմած է որուն նպատակը պիտի ըլլայ սանձադրական վարչութեան մը հիմնական ձեւը մշակել:

Ասկէ պարզօրէն կեդրաբացութիւն Թուսիան մէկ կողմէն արտաքին կողմէ խղզիլ դժգոհ տարրը: միւս կողմէն ալ զգալով թէ ժամանակներ կան ժողովրդիներու կեանքին մէջ, որ ամենարուսն խստութիւններն իսկ չեն կրնար կասեցնել ժողովրդային պոթիկութիւնները, փայլալայնու, ժամանակ վատակելու համար խոստումներ կը ընեն երկրի վրա ծանրացող ուժի մին ձեւը փոխելու: Այդ խոստումները, որչափ ալ որ անոնք կեղծ ըլլան ու թակարթներ, կապացուցանեն թէ նորն անգամ համոզուած է որ ռուս ժողովուրդին գիտակից տարրին զրծգոհութիւնները հանդէպ ներկայ

փտած, գող եւ հայրենիքի իրական շահերը չըմբռնող ու չհիմնական արդարացի են եւ այդ դժգոհութիւնները կրնան կատարել ուրակաւ ի մը ձեւը առնել եւ քարոզարարութեամբ արդարացի դրոշմը խլիւղած են ողու ժողովուրդէն:

Իրական պահպանողական մասունքն իսկ այլեւս անկարող ըլլալով թագնել ներկայ ուժգին կործանարար թերութիւնները, ալ հայհոյանք չի թափեր ողու ազատական արարիւն զլիւնը, այլ մեղմորէն խօսելով սահմանադրականներու բռնած ընթացքի մասին, կը տգնի համոզել որ ներկայ ճգնաժամին մէջ, երբ հայրենիքը վտանգի մէջ է եւ զօրեղ հակառակորդ մը կայ դէ՛ առ դէ՛մ, ապստամբական տարրը կը սխալի եւ թէ կը ցանկայ որ Ռուսիա յաղթուի, կարծելով որ այդ պարտութիւնէն յետոյ իր ցանկացած ուժերը պիտի ծնուի: Ընդհակառակը յաղթող ողու կատարութիւնէն կարելի է որ ներքին բարենորոգումներ տեղի ունենան, իսկ պարտութեամբ պարագային ներկայ կատարութիւնը ոչ մի փոփոխութեան չի ենթարկուիր:

Կարճը, Ռուսիոյ ներկայ ուժգին վտանգի մէջ է եւ ինքն ալ ատ վրտանը կզգայ:

Ս.

ՅՈՒՆՈՅ ԱՓԵՐԷՆ

Իզմիր 28 մայիս 1904

Սասնոյ բարձունքը՝ Տարսուի այդ անմատչելի վայրին մէջ՝ կուեղ քա.

«ԿՐԱԿՈՏ ԶՈՒՐԸ»

(Սիբիրի կեսնի իջ)

(Թարգ. ռուսերէնից)

Բ.

—Էն, Բոյագիր, Բոյագիր, ասում էր ձեր Մուրաշովն Բոյագիրին.— Վրտանդուր խաղ եւ սկսել կանգուրի հետ: Վտանգաւոր, գէշ... Իս քեզ մեք կը գցէ, եւ ոչ միայն եղջերուներով կը խլէ քեզնից, այլեւ աւելի թանկ բան...:

—Չէ կարող, ինքնամտած կերպով պատասխանում էր Բոյագիրը. եւ մինչեւ ծովը կը փախչեմ նրանից:

Բայց միթէ՞ լաւ բան է փախչել այն բարեկամից, որը այսքան ժամանակ ձեզ կրակոտ ջուր է տուր չէ, լաւ չէ: Բայց եւ պիտի փախչեմ այն քան ժամանակ, մինչ որ ուղղվեմ ուղղվելուց յետոյ պարտքս կը տանեմ եւ կասեմ ընդհին, եւ չէի քեզ վշտացնողը, այլ այն օղին որ դու ինձ տարիս էիր:

—Աւելի լաւ է դու օլուց ձեռք քաշես, ասում էր Մարիամը, դու կրկին կանոնաւոր տանուէր կը դառնայիր:

—Այո, այո ձեռք քաշիր, արձագանքում էր պառաւ Էտերգիրը, որ վերաբնակվել էր Բոյագիրի տանը, իսկ ինքն իրեն մտածում. յիմարութիւն է ձեռք քաշել նրանից, ինչ որ մարդին ուրախութիւն է պատճառում աղքատութեան եւ վշտի մէջը:

—Նա ինձնից աւելի ուժեղ է, ասում էր վշտաբեկ Բոյագիրը, այնու

ջամարտիկ հայորդիներու խիզախ ու յաղթական կոխները ու վճռականորէն գոռացող զէնքերու ձայնը՝ ինչպէս հանուր քաղաքակրթեալ ազգերուն նոյնպէս տեղոյս բոլոր ժողովրդեան հիացման առարկայ դարձած է: Եւրոպական ինչպէս նաեւ յոյն (Յունաստան սպուած) լրագիրները օրը օրին կ'արտագրեն Սասնոյ այժմեան դրութիւնը պատկերացնող Պօլսէն քաչուած հետազոտները՝ որոնք իզմիրի ամեն դասակարգի անձերու կողմէ կը կարդացուին. մանաւանդ հայ հասարակութիւնը խիստ հետաքրքիր, սենդուտ ու յուզմանկար վերաբերութիւն մը ցոյց կուտայ այդ լուրերուն հանդէպ, իսկ թուրք հասարակութիւնը՝ իր լրագիրներով մէկտեղ՝ մեծ ցնձութեան մէջ է... Ռուսիոյ ձաբոնի կողմէ՝ կրած պարտութիւններուն համար: Այսօր ամեն թուրք լրագիր մը ձեռք ձգելուն պէս՝ կ'սկսի Մայրաքաղաք Ստամբուլի մասին գրուած լուրերը կարդալ ու ներկայ քաղաքական կացութեան միջոցին մեծակալ Ռուսիոյ պարտութիւններուն մէջ գտնել իր միջնորդութիւնը...:

Անցեալ շաբթօրեւնէ սկսեալ տեղս հասնող ֆրանսական 18 զրահաւորները իզմիրի ձոցին մէջ փոռած են. քրիստոնեայ բնակչութեան՝ մանաւանդ ֆրանսացի հասարակութեան մէջ մեծ ոգեւորութիւն մը կը սիրէ: Անցեալ երկուշաբթի գիշերը (24 մայիս) տեղոյս ֆրանսացի գաղութը՝ ի պատիւ իր հայրենակից զօրականներուն շքեղ պարահանգէս մը տուին Սքորթիկ-գլիւպի մէջ: Այդ գիշեր քաղաքը ամբողջ լուսազարդուած էր, եւ

մեծ իրարանցում մը կար. Սքորթիկ-գլիւպը հիանալիօրէն պնդազարդուած էր. ուր ներկայ էին Պօլսոյ ֆրանսական դեսպանը, (որ այդ միջոցին Պօլսէն եկած էր) ներկայ նաւատորմին հրամանատարը (ամիրալ), զրահաւորներու ամբողջ զօրականները ու սպայակոյտը, տեղոյս բոլոր հիւպատոսները՝ իրենց պաշտօնատարներով, կառավարական աստիճանաւոր անձնաւորութիւններ, զանազան ընկերութեան անօրինութիւնները, ու սկանաւոր անձնաւորութիւններ: Այդ պարահանգէսին համար եղած ծախսը 300 ոսկի կը հաշուուի: Յաջորդ օրը կրեքշարթի Պօլսոյ դեսպանը եւ ամիրալը մեկնեցան Պօլս, ժողովրդեան մէջ՝ այս մեկնումի մասին շատ մը զրոյցներ կը պտտի, եւ տարբեր տարբեր մեկնութիւններ կը տրուի, ու մանք կ'ըսեն թէ քացած է Ռուսիոյ պահանջը ուղիւ, կամ այդ պահանջին ի հաշիւ նոր շինած երկու զրահաւորները պահանջելու, ու մանք քաղաքական հանգամանք մը տարով կ'ըսեն թէ նօս մը պիտի ներկայացնէ Սուլթանին, որ ինչներ ալ տարբեր, ինչ որ ալ ըլլայ մտ ապագայի մէջ ամեն բան կը յայտնուի:

Անցեալ շաբթուան մէջ կարեւոր դէպքերէն մին ալ հետեւեալն էր: Մայիս 21 ուրբաթ օրը՝ երեկոյեան մօտ, իզմիրէն քաղաք ժամ հետոս գտնուող Սիմիֆրի կողմէ ամբարան մը օդակայան մը եւ երկու ոստիկան-զինուորներ (ժանտար) օդիւքանութիւն ըրած միջոցնուն սրճարանին առջեւէն կանցնի ընթացի պահակ (գօլճի)

այն ժամանակի մասին, երբ ինքը իր խրճիթում հիւրասիրում էր բարեկամներին եւ չէր վախենում ոչ ծանր խօսքերից եւ ոչ էլ շար մարդկանցից: Մանուկները խրճիթի անկիւնում խաղում էին շան հետ. ամենքն էլ սուս ու փուս նստած էին, կարծես թէ փոթորիկ վոյցը թմրեցրել էր խրճիթի բնակիչներին, որոնք թագնով էին եօթ լճերի եւ շորս բլուրների ետեւում:

Ու յանկանք նրանք տեսան մի սարսափելի տեսիլք. եւ ամենքին ալ թուաց թէ իրենց տեսածը երազ է:

Դուրսը լսվեցին շների հաչոց, զանգակների զնգոց: Երեսներին հետ խալացող շուրջ մտմոց, մազերը ցցվեցին, նա վազեց դրան մօտ եւ սկսեց կատաղաբար հաչել. դուռը ծածկող մորթերը շարժեցին եւ նեյս մտաւ բարձրահասակ, եղջերուի մորթից շինված վերարկուով մի մարդ: Ու վերարկուէն հանելով նրստեց օճախի քովը:

Դա կանգուրն էր: Նա անուշութեամբ սկսեց խօսել, բայց աչքերը խիստ էին, իսկ դէմքը խոփում:

—Ինչո՞ւ էիր ինձնից թագնվում Բոյագիր. միթէ՞ լաւ աշխատաւորը իր տիրոջից թագնվում է:

Բոյագիրը սկսեց զլիսով խոնարհութիւններ անել եւ ստորնանայով ներողութիւն խնդրել:

—Բոլորը պէտք է վճարեմ, եւ յաւանան կը վճարեմ, միայն մի քիչ ժամանակ տուր... այս սակով Բոյագիրը նայում էր կանգուրն աչքերի մէջ աշխատելով նրանցում խղճահարութեան կայծ տեսնել:

մը՝ գինով վիճակի մէջ եւ դանակը ձեռքը բռնած. ոստիկանները դուրս կելլեն եւ կըստիպեն որ դանակը մէջքը դնէ եւ երբ նա կընդդիմանայ ամենքն մէկ կսկսին սոսկալի օրէն ծեծել զայն: Նոյն միջոցին այդ սրճարանի կից գտնուող ջրաղացին այս պահացի պահպանը՝ որ այդ գօլճիին եղբայրն է, դուրս կելլով կաշխատի եղբայրը բարբարոսներու ձեռքէն ազատել. ու երբ այս վերջինները կը շարունակեն իրենց բարբարոսութիւնը ի գործ դնել արդէն կիսամեծ վիճակի հասած մարդուն վրայ, իսկոյն կը քաշէ ատրճանակը ու երեքն ալ կը գարնէ. այս հրագններու ձայնէն անմիջապէս ուրիշ ոստիկաններ կը հասնին եւ կը ձերբակալեն ոճրագործը իր եղբոր հետ. ու մինչեւ կառավարութեան դուռը բերելնին ճամբան մեոցնելու աստիճան կը ծեծեն: Այն գիշերը ոստիկանը կը մեռնի ծանրապէս վիրաւորուած ըլլալուն, նոյնպէս ժանտար մը ներէն մին երկու օրէն կը մեռնի, իսկ միւսը որ դանակէն թեթիւօրէն վիրաւորուած էր դեռ կը դարմանուէր:

Վարուճակ

Ա Զ Դ

Հայրենիքի գաղափարը.— Մ. Վարուճակն հրատարակութիւն Զ. Յ. Դաշնակցութեան ի ժնէվ, Գին 1 ֆր. Վառնայի մէջ կարելի է գնել Բարկէն-Սիւնի ընթերցարանէն:

Բայց կանգուրն չէր դաժանաբար եւ աչքերն էլ անթափանցելի էին:

Ներս մտաւ կանգուրն գործաւորը, բարձրահասակ մի ողու կտրիմ, երկար դանակը գոտին խրած. նա թէյամանի մէջ ջուր լցրեց եւ դրեց կրակի վրայ, բերեց նաեւ շաքար, հաց, չորացրած միս եւ մի սրակ օղի: Առաջինին հետեւեց երկրորդ գործաւորը, որը ներս մտնելով նոյնպէս նստեց օճախի քովը:

Կանգուրն օղու գաւաթը լցրեց եւ տարով Բոյագիրին ասեց.

—Իմիր իմ կենացս: Երկու գաւաթ էլ իրար ետեւից տեց պատաւ Էտերգիրին:

Պառաւը ազահարար գաւաթները սեղմելով ձեռքերի մէջ խմեց ու շորհակալութիւն յայտնեց:

—Շնորհակալ եմ, սէր: —Կրկին խմիր:

Ու Էտերգիրը Բոյագիրից երկու անգամ աւելի խմեց. երբ Բոյագիրը դեռ նոր էր կենդանութիւն ստանում, նա արդէն արքած էր եւ կրակի մօտ նստած, ամբողջ մարմնով առաջ ու յետ կը շարժվում եւ կամացուկ երգում այն, ինչ որ նրա երեւակայութեան մէջ երեւում էր մը շուշով պատած:

Մարիամը հրաժարվել չը յանդրեց եւ մի քիչ խմեց:

Կանգուրն մի քիչ կերաւ, իւր խմեց եւ դամանօրէն շուրջը նայեց, կարծես ուզելով մի բան ստել:

—Իսկ հիմա, վերջապէս խոսեց նա, հաչունքս պէտք է կարգադրեմ:

—Մի քիչ համբերիր տէր, եւ ամենք կը վճարեմ: (Շարունակելի)

ՕՐ. ԱԼԻՍ ՍԹՕՆ ՊԼԱՔՈՒԷԼ

Ամերիկայի հայ հասարակութիւնը գեղեցիկ միտքը յղացած է հայութեան յայտնի բարեկամունքուն՝ օրինորդ Ալիս Պլաքուէլի ի նպատակ հայ ժողովրդին գործունէութեան տասնամեակը տօնելու և օրինորդ համասունէր յիշատակով մը պատուելու:

Այդ տօնախմբութիւնը տեղի ունեցեր է մայիս 30, որուն մասնակցելու հրաւիրուած են եղեր Ամերիկայի շատ հեղինակաւոր տիկիներ ու պարոններ, բոլորն ալ հայութեան, ինչպէս և ամբողջ ճնշուած մարդկութեան բարեկամներ:

Համակրելի օրինորդին հայերու կողմէն ներուեր է իրեն իւզանկար պատկերը, գծուած հայ երիտասարդի մը ձեռքով:

Բաւական ատենախօսութիւններ տեղի ունեցեր են, թէ հայերու և թէ ամերիկացիներուն կողմէն:

Իսկ ինքը օրինորդ Ալիս, բուն ծափերու և ցոյցերու ընդմիջմամբ, ինչպէս կը շարունակէր, ընդունելութեան հետեւեալ ճառը ըսած է.

«Գրեթէ անկարելի է ինծի համար խօսել այսպիսի պարագաներու մէջ. այս պատկերը, այնքան պատարեր զայն նկարողին, շատ աւելի լաւ կարտայայտէ իմ դէմքը քան իմ կենդանի դէմքը ինքնին, Ես պիտի ներկատեմ այս կենդանագրին արմէքը իբրև ամենէն անկեղծ նէրը իմ սիրեցեալ բարեկամներէս որ անկափ կուրախացնէ զիս:

Սակայն նէր մը որ շատ աւելի մեծ արժէք պիտի ունենայ քովս, այն է որ ամէն հայ այս երկրի և իր հայրենիքի մէջ լինի մեծ և պարտաւոր քաղաքացի»:

Յարգելի օրինորդին ցանկացածը այնչափ փոքր և միեւնոյն ժամանակ մեծ նէր մըն է. որ Ամերիկայի մէջ գտնուող հայութեան վրէժն պարտք կը դրուի այդ մեծ մտքով պարզ խօսքերը միշտ ժխտքերուն մէջ պահել, որպէս զի կարենան հայը այդ գեղեցիկ ու քաղաքակիրթ երկրին մէջ ազնիւ, բարեկիրթ և զաղափարներու համար զոհուելու պատրաստ ցեղ մը ներկայացնել:

Կը շնորհակարտենք Ամերիկայի հայերը որ այդչափ հոգացող ու հեղինակաւոր քոյր մը ունին իրենց քովը. որը թէեւ օտար մըն է, բայց հայուն կը ցանկայ այն, ինչ որ պիտի ցանկար հայ ժողովրդին բարեքը ըմբռնող հայ մայր մը կամ քոյր մը:

ՀԱՅՎԱԿԱՆ ԶԱՐԺՈՒՍՆԵՐ

Իէլիասին պատասխանը հայերու կացութեան և թուրքի մասին որ տեղի ունեցաւ այն օրերը, երբ Ֆրանսական փոխ ամիրալ Գուրտօն իր պաշտօնակիցներուն հետ միասին Երլազի մէջ կը պատուասիրուեր շատ գէշ տըպաւորութիւն թողուցած է Սուլթանին և Բ. Գրան վրայ, որոնք յայտարարած են թէ բոլորովին կտտորած չէ տեղի ունեցած:

Ֆրանսական դեսպան Պ. Քօնսթան միանալով Անգլիական և Ռուս դեսպաններուն հետ խիստ կերպով բողոքեր է հայերու դէմ

եղած հալածանքներու համար. այդ բողոքին պատասխան տրուեր է որ խստիւ հրաման զրկուած է Մուշ և Սասուն գտնուող թուրք զինուորական և քաղաքական իշխանութիւններուն, որ ու է բանութիւն գործ չը դրուի հայ խաղաղ ազգաբնակչութեան հանդէպ:

Յունիս 2ին Խտալական Երեսփոխանական Ժողովին մէջ ի պատասխան հայերու կացութեան մասին եղած հարցապնդումին, արտաքին գործոց նախարարութեան խորհրդակներ յայտարարած է որ Խտալական կառավարութիւնը հայերու դէմ եղած հալածանքներու ատթիւ Բ. Գրան նօթա մը տուած է:

Անգլիական դեսպանը առանձնապէս խստիւ բողոքած է մեծ վէջի ին Բասուրի և Մուշի մէջ հայերուն դէմ տեղի ունեցած հալածանքներուն առթիւ: Մեծ վէջի բոլոր յայտարարած է որ խաղաղ ժողովրդին դէմ հալածանք չէ եղած:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Վիէնայի Գ. Քօրէս. «Թերթը» Պոլսէն կիմանայ որ պանք Օթոմանին տնօրէնը զինքը սպաննել սպառնացող շատ մը նամակներ ընդունած է. իշխանութիւններն ալ այդ տեսակ նամակներ ընդունած են, և յս առթիւ ձերբակալութիւններ և խուզարկութիւններ տեղի ունեցեր են Պոլսոյ մէջ:

Ըստ թրքական աղբւրներու մինչեւ մայիս վերջ 9036 պուլկար գաղթականներ վերադարձած են իրենց տեղերը:

Տեղեկութիւններ ստացուած են որ Պոլսոյ և Սելանիքի մէջ տրինամիտով զաւազրութիւններ կը պատրաստուին:

Վիէնայի թերթերը կիմանան թէ թուրք կառավարութիւնը Քուրդի գործարանէն պահանջած է շատ շուտով յանձնել յանձնարարուած թնդանօթները:

Բ. Գուրը յայտարարած է որ չի կրնար յոյները բաթէնթէն ազատել, որովհետեւ ստիկէ 150 հազար լիրայի եկամուտ կայ, և թուրքի ալ երկրին մէջ բարենորոգումները իրագործելու համար ստակի շատ պէտք ունի:

Պոլսէն 31 մայիսի եկած հեռագիր մը կը հերքէ այն լուրը, որով կիմացուէր թէ Ռուսիա արտօնութիւն ուզած է իր նաւատորմի վրէժն արտանկէն անցնելու համար:

Պոլսէն 31 մայիսի եկած հեռագիր մը կը հերքէ այն լուրը, որով կիմացուէր թէ Ռուսիա արտօնութիւն ուզած է իր նաւատորմի վրէժն արտանկէն անցնելու համար:

ՌՈՒՍԻԱ

Վերջերս լուր տարածուեցաւ թէ Յարին կեանքին դէմ դաւադրութիւն եղած է. այժմ այդ

լուրը հերքելով կը բացատրեն հետեւեալ ձեւով.

Երբ Յարը Յարուհուն հետ կը զբօսուին պարտէզին մէջ, նախորդ պարտիզական անկատելի կերպով Յարին առջեւ կուգայ ու ծնկներուն վրայ ինչալով կը յայտարարէ որ ինք կինը սպաննած ըլլալուն համար, մահուան դատապարտուած էր, վերջը Սախալին մշտական արտօրի զրկուած են, սակայն ինք յաջողի է Իրախիլ, ուստի Յարէն կը խնդրէ որ ներում շնորհէ, որ այլևս ուստի կանու թնէն չը թագնուի:

Կայսերական հրամանով մը մայիս 27էն սկսեալ զէնքի կը կոչուին զանազան նահանգներու մէջ պահեստի սպանները և զինւորները:

«Պեղ. Ի. զլր.» թերթը Բեթերսպուրկէն կիմանայ թէ մեծ թիվայի զեսպան Մակ-Կուրնիկ, որ կը բնակէ իշխան Լայշթէն, պերկի գեղեցիկ պալատին մէջ, հրաւիրուած է տնէն դուրս ելլալ:

Ռուս հասարակութիւնը բոլորէ կրնէ Ամերիկայի զեսպանին և անոր կնոջը, մեղադրելով թէ անմիակ զիւանագէտը եղած է որ գացած է ձարնիոյ զեսպան Քուրինօն ճամբու գնելու վերջինս Բեթերսպուրկէն հեռացած միջոցին և սրտանց սեղմած է Գուրնօյին ձեռքը:

Անգլիական թերթերը Բեթերսպուրկէն կիմանան թէ զինւորական միջոցներու վարչութեան մէջ 70 միլիոն ռուբլու գուղութիւն պատահած է:

Մայր կայսրուհին ալ կարմիր խաչի գրամներուն վերաբերեալ մեծ զեղծումներ գտած է:

ՅՐԱՆՍԱ

Լօրէն քաղաքի գործարարներուն գործազուլի ատեն զօրքի և առաջիններուն միջեւ ընդհարում տեղի ունեցեր, երկու կողմէն ալ քանի մը վիրատու շերտեր կան:

Լօնտօնէն կը հաղորդեն որ Ֆրանսական կառավարութիւնը Թօնքի մէջ 10 հազար զինուոր զէնքի կոչեր է, որովհետեւ չինական սահմանազլիին մօտ երեւան եկած են շատ մը չինական հրոսախմբեր և յարձակումներ գործած են ֆրանսական հողին վրայ:

Երեսփոխանական Ժողովը յանձնախումբ մը կազմած է Գոմպէ կաշառելու խնդիրը քննելու համար:

Յանձնախմբին մէջ կան քսան ընդդիմադիր երեսփոխաններ. կը կարծուի որ քննութիւնը շատ արագութեամբ պիտի կատարուի:

—)o(—

ՌՈՒՍ—ՀԱՐՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Բեթերսպուրկէն կը հաղորդեն թէ մէնէրալ Քուրաթթիւն հեռագրած է որ՝ ճարտնացիները կը շարունակեն յառաջ խաղաղ գէպի թալիսի կիրճը:

Մովակալ Թօկօ Թօքիա հեռագրած է թէ՝ Գայպինկի ռմբակոծուելէն յետոյ ուսները պարպած են ինկուան:

Պէրլինէն կը հաղորդեն որ Խարպինի մէջ երկու ռուս սպաներ քանի մը տարուան բանաարկութեան դատապարտուած են, որովհետեւ չինացիներուն վառօք ծախած են:

Լօնտօնէն յունիս մէկին կը հեռագրեն թէ՝ 25 հազար ճարտնացիներ Մուկաէնի կը մտնան:

Բօրթ Արթուրի հրամանատարը հրաման ստացած է որ՝ քաղաքին առման պարագային փորձ ընէ Թօգօի նաւատորմի որչնչացնել, որպէսզի բալթիկեան նաւատորմի իր կամ պահուն Թօգօն աւելի քիչ ուժ ունենայ:

Թօքիոյ մէջ ճարտնական յաղթութիւններու առթիւ եղած ժողովուրդային տօնախմբութիւններուն կը մասնակցին եզերանգլիացիներն ու ամերիկացիները:

Նիւեօրքէն Լօնտօն կը հաղորդեն որ ստոյգ կը համարուի այն լուրը, որով կիմացուէր թէ Ամերիկան ձարնի ծախած է ընդժողովեայ «Բրօթէթթօր» նաւը:

Յունիս 2ին Թօքիօն Լօնտօն կը հեռագրեն թէ Բօրթ-Արթուրի մուտքը բոլորովին բաց է և Ռուսական նօթիք զրահատրը կը քցեր է ձովը ելլալ:

Ամիրալ Թօգօ եւս իր մէկ տեղեկագրով կը հաստատէ նօթիքին և տասը ուրիշ փոքրիկ նաւերու ձովը ելլալը, ձարնացիները աշխատած են ձովուն ներսերը գրաւել զանոնք, բայց ուսները խաբուած չեն և կրկին նաւահանգստին ներսը քաշուած են:

Վլատիվաթթօին ռուս նաւատորմի իբր թէ բաց ձովուն մէջ կը գտնուի, եւ այդ իրողութիւնը ամենքը զարմացուցեր է:

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Գրոշակի, Վառնայի մէջ բաժանորդ գրուի ուղղորդող թող զիմեն Բարկէն-Սիւնի ընթերցարանի վարչութեան:

Отговорникъ Мурадъ-Ераносянъ Печатница „Взаимность“ Варна